ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

12.06.2024 21:27

Ինչպես նախորդիվ տեղեկացրել էինք, բողոքի ակցիա իրականացնելու հետևանքով բերման ենթարկված քաղաքացիներին առաջնային անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով դեռևս նախորդ ամսվա սկզբից ՀՀ փաստաբանների պալատում ձևավորվել է փաստաբանների արագ արձագանքման խումբ:

Հաշվի առնելով բողոքի ակցիաների շարունակականությունը և բերման ենթարկվող քաղաքացիների առաջնային իրավաբանական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը՝ արագ արձագանքման խումբ շարունակում է իր աշխատանքները:

Հիշեցնենք, որ բերման ենթարկվող քաղաքացիները կամ նրանց հարազատները խմբի փաստաբանների հետ կարող են կապ հաստատել ՝ 094-611-138 հեռախոսահամարով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })